## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ք. Հրազդան 09.08.2016թ. ժամը 11[00]

# ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար <<ԿՈՏ-ԲԸԱՇՁԲ-2016/01>> ծածկագրով բաց ընթացակարգով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

***ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝***

***Հանձնաժողովի նախագահ՝***

**Ալեքսան Եղիշյան** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

***Անդամներ՝***

***Վարդան Քալանթարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

***Կամո Բունիաթյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ,

***Սլավիկ Եղիազարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

***Քրիստինե Յավրիյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ,

***Հանձնաժողովի քարտուղար՝***

***Արամ Վիրաբյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ

## ՕՐԱԿԱՐԳ՝

**1.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հրավերով և հայտով սահմանված պահանջներին համապատասխանության որոշում և չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ ներկայացրած լրացուցիչ հիմնավորումների գնահատում.**

1.1 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով և հայտով սահմանված պահանջներին:

1.2 Չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած լրացուցիչ հիմնավորումը համոզիչ չէ և չի ներկայացված որևէ հաշվարկ <<Գեվ-Էլլ Պլաստ>> ՍՊԸ կողմից գնային առաջարկը հիմնավորելու համար:

**2.Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

<<ԿՈՏ-ԲԸԱՇՁԲ-2016/01>> ծածկագրով բաց ընթացակարգով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշեց.

| Չափաբաժնի համարը | Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակցի անվանումը |
|---|---|---|
| 1 | 1 | <<Նաիրիշին>>ԲԲԸ |
| | 2 | <<ԱՆՆԱՐ>> ՍՊԸ |
| | 3 | <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ |
| | 4 | <<Աննա 80>>ՍՊԸ |
| | 5 | <<Ագարակ>> ԲԲԸ |
| | 5 | <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ |
| | 6 | <<Տրանսունիվերսալ>>ՓԲԸ |
| | 7 | <<Էլիտ Հիլզ>>ՍՊԸ |
| | 8 | <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ |
| | 9 | <<ԳՈՌՊԼԱՍՏ>>ՍՊԸ,<<Վահագն 94>>ՍՊԸ |
| | 10 | <<Բիդեք>>ՍՊԸ |
| | 11 | <<ՆԱՄԵՆԱՍԵԴ>> ՍՊԸ |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

**3.** Գնահատող հանձնաժողովն որոշեց՝ որ <<Գեվ-Էլլ Պլաստ>> ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված ցածր գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորումը համարվել է ոչ բավարար և հիմնավոր, հաշվի առնելով վերոգրյալը <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի 3-րդ մասի համաձայն մերժել <<Գեվ-Էլլ Պլաստ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցից (<<Նաիրիշին>>ԲԲԸ) պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր և <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի 3-րդ մասի համաձայն ներկայացնել չհիմնավորված ցածր գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորումներ:

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը, ժամը.**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել <<Նաիրիշին>>ԲԲԸ մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման հաջորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

***Հանձնաժողովի նախագահ՝*** ---------- ***Ա.Եղիշյան***

***անդամներ՝*** ---------- ***Վ.Քալանթարյան***

---------- ***Կ.Բունիաթյան***

---------- ***Ս.Եղիազարյան***

---------- ***Ք.Յավրիյան***

***Քարտուղար՝*** ---------- ***Ա.Վիրաբյան***